ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24 հունվարի 2014 թվական գյուղ Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Ամասիայի համայնքի ավագանին

որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի գյուղապետարանի աշխատակազմի և «Նանե նախակրթարան»,«Համայնքային գրադարան»,«Մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 43-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Որոշմամբ հաստատված հավելվածում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի վարիչ տողի պաշտոնային դրույքաչափը սյունակի «138600» թիվը փոխարինել «117500» թվով, պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սյունակի «74.11» թիվը փոխարինել «62.83» թվով, սահմանված դրույքաչափը սյունակի «138600» թիվը փոխարինել «117500» թվով, ընդամենը տողի «1834800» թվերը փոխարնել «1813700» թվով

«Նանե նախակրթարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի հավելվածի 3-րդ կետի դաստիարակ տողի սահմանված դրույքը սյունակի «1.2» թիվը փոխարինել «0.6» թվով, 4-րդ կետի դաստիարակ տողի սահմանված դրույքը սյունակի «1.2» թիվը փոխարինել «0.6» թվով, 5-րդ կետի դայակ տողի սահմանված դրույքը սյունակի «1.2» թիվը փոխարինել «0.6» թվով, 6-րդ կետի դայակ տողի սահմանված դրույքը սյունակի «1.2» թիվը փոխարինել «0.6» թվով, ընդամենը տողի սահմանված դրույքը սյունակի «13.5» թիվը փոխարինել «12.9» թվով:

Ավագանու անդամներ՝

Դավթյան	Արտեմ	կողմ
Հովսեփյան	Հովսեփ	կողմ
Մանուկյան	Արթուր	կողմ
Մկրտումյան	Արթուր	կողմ
Քոչոյան	Ալեքսան	կողմ
Սարգսյան	Ալեքսան	կողմ

Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

24 հունվարի 2014 թվական
գյուղ Ամասիա